ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE7C-C381-422F-A153 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/11380/02/24 ք. Երևան
«02» փետրվարի 2026թ.

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Մ. Հարությունյանը (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով ըստ հայցի «ԳՈՎԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ պատասխանողի կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԲՄԽԾՁԲ-25/01» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.12.2024 թվականի ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 9-րդ արձանագրության 2.1.2 կետով կայացրած «ԳՈՎԹԵՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայտը անբավարար գնահատելու մասին որոշումը և «ՆԱԲԻՔՍ ՍՈՖԹ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, թիվ ԵԴ2/11380/02/24 քաղաքացիական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հայցվորի ներկայացուցիչը 30.12.2024 թվականին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ պատասխանողի կարիքների համար հայտարարված «ԵՔ-ԲՄԽԾՁԲ-25/01» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 23.12.2024 թվականի ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 9-րդ արձանագրության 2.1.2 կետով կայացրած «ԳՈՎԹԵՔ» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու մասին որոշումը և «ՆԱԲԻՔՍ ՍՈՖԹ» ՍՊ ընկերությանն ընտրված մասնակից ճանաչելու որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, որը մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Ճիլաջյանին:

Դատավոր Ա. Ճիլաջյանի՝ 28.02.2025 թվականի վճռով ներկայացված

հայցը մերժվել է:

Նշված վճռի դեմ հայցվոր կողմը ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը Վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 10.10.2025 թվականի որոշմամբ բավարարվել է: ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 28.02.2025 թվականի թիվ ԵԴ2/11380/02/24 վճիռը բեկանվել և գործն ամբողջ ծավալով ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Թիվ ԵԴ2/11380/02/24 քաղաքացիական գործը 23.01.2026 թվականին՝ ժամը 21:30-ին, մակագրվել է դատավոր Մ. Հարությունյանին, որը դատավորի աշխատակազմին հասանելի է դարձել 26.01.2026 թվականին:

(I) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում:

Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 411-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանի եզրափակիչ դատական ակտը բեկանելու և գործը նոր քննության ուղարկելու մասին դատական ակտ կայացնելու դեպքում դատարանը գործն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է գործը վարույթ ընդունելու մասին որոշում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 411-րդ, 199-200-րդ հովածներով՝ Դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ԵԴ2/11380/02/24 քաղաքացիական գործն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել **2026 թվականի մարտի 16-ին**՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Մալվինա Հարությունյան

Digitally signed by HARUTYUNYAN MALVINA